


## ԴԱՍ 5

### ՕԴԸ



Օդը — ծանրութիւն ունի<sup>՞:</sup>

- տեղ կը գրաւէ<sup>՞:</sup>
- ծաւալ ունի<sup>՞:</sup>
- քափանցի<sup>՞կ</sup> է<sup>:</sup>
- ջուրին մէջ կը լուծուի<sup>՞:</sup>

Օդը կը բաղկանայ գլխաւորապէս բորակածինէ, քրուածինէ եւ այլ կազերէ, օրինակ՝ ջրածինէ եւ բնածխական կազէ:

## ՃՆՇՈՒԱԾ ՕԴԻ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

**Փորձ.— փուչիկ.**

1. Օդով լեցուր փուչիկը, ապա կապէ՛ անոր բերանը:
2. Ափովդ ճնշէ՛ փուչիկին վրայ, ապա ազատ ձգէ՛ փուչիկը:  
Ի՞նչ կը պատահի:



Փուչիկը օդով լեցուն է. Երբ փուչիկը ձեռքով ճնշեն, կը զգանք, որ օդը կը դիմադրէ եւ կը տեսնենք, որ փուչիկը կը ձեւափոխուի:

Իսկ երբ փուչիկը ազատ ձգուի, այսինքն երբ ճնշումը վերցնեն, փուչիկը կը վերագտնէ իր նախկին ձևը:



Ինչո՞ւ ինքնաշարժի մը կամ հեծիկի մը անիւր օդով կը լեցնենք:

3. Ափիդ մէջ դի՛ր օդով չլեցուած փուչիկը: Քանակով զա՛րկ անոր վրայ: Ի՞նչ կը զգաս:


4. Ափիդ մէջ ա՛ն օդով լեցուած փուչիկը: Քանակով զա՛րկ անոր վրայ: Հիմա ի՞նչ կը զգաս:

Եթք փուչիկը օդով լեցուած չէ, հար-



ուածի ուժին ազդեցութիւնը գրեթէ ամբողջութեամբ կը փոխանցուի ափին: Իսկ եթք փուչիկը օդով լեցուած է, օդը կը ստանայ հարուածը, փուչիկը կը ցատկի, այսինքն փուչիկին մէջ լեցուած օդը անոր կու տայ առածգականութիւն, միաժամանակ թեթև ցնելով հարուածին ազդեցութիւնը:

Գծէ՛ ինքնաշարժի օդով լեցուած անիւ մը:



Ի՞նչ կը պատահի,  
եթք ինքնաշարժին  
անիւը ծակի:

.....


.....

.....

## ՕՐԻ ՃՆՇՈՒՄԸ

Փորձ. Գաւաք, ջուր, բուղը, թիրեղէ տուփ,  
աման:

1. Գաւաքը ամբողջութեամբ լեցո՞ւր ջուրով:
2. Գաւաքին վրայ դի՞ր թուղը զգուշութեամբ եւ արագութեամբ դարձո՞ւր զաւաքը (տե՞ս պատկերը):
3. Ազատ ձգէ՞ թուղը:  
ի՞նչ կը պատահի, ինչո՞ւ:




Թուղը փակած կը մնայ զաւաքին եւ ջուրը չի քափիր, որովհետեւ օդը կը ննշէ թուղին վրայ, վարէն դէպի վեր:

4. Գաւաքը կողմնակի դարձո՞ւր:  
Թուղը իր տեղը փակած կը մնա՞յ: Ինչո՞ւ:



5. Թիթեղէ տուփին քառորդը (1/4ը) լեցո՞ւր տաք ջուրով: Թիթեղէ տուփը եւ ջուրը աւելի տաքցո՞ւր եւ տուփը կափարիչով զոցէ՛: Ապա ձգէ՛, որ տուփը պաղի:



Ի՞նչ կը պատահի տուփին պաղելու ընթացքին.

Ինչո՞ւ:

---



---



---



---

Օդը կը ճնշէ ամէն ուղղութեամբ:

Ամբողջացո՞ւր:

- 1) Օդը կը պարունակէ քրուածին, շոգի եւ բնածուխ:
- 2) Օդը ծանրութիւն ունի, քայց չենք կրնար կշռել:
- 3) Օդը աւելի կը ճնշէ դէպի վար քան դէպի վեր:
- 4) Օդը ծաւալ ունի եւ տեղ կը գրաւէ:

ԱՅՍ ՈՉ

|                          |                          |
|--------------------------|--------------------------|
| <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
|--------------------------|--------------------------|

|                          |                          |
|--------------------------|--------------------------|
| <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
|--------------------------|--------------------------|

|                          |                          |
|--------------------------|--------------------------|
| <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
|--------------------------|--------------------------|

|                          |                          |
|--------------------------|--------------------------|
| <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
|--------------------------|--------------------------|